



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի N°Ս  
քաղ. Երևան

**«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ  
ՌԱԴԻՈՀԱՃԱՖԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի N°169Ն որոշումը և հաշվի առնելով «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հուլիսի 19-ի N°198/18-Ո11 և հուլիսի 23-ի N°241/18-Ո11 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հայտը և Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի և Լոռու մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար տրամադրել 14515/14935ՄՀց, 14543/14963ՄՀց, 14571/14991ՄՀց, 22015/23023ՄՀց, 22022/23030ՄՀց, 22078/23086ՄՀց, 22134/23142ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն՝ մինչև 2028 թվականի մարտի 3-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության՝ Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի և Լոռու մարզերում ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման համար տրամադրվող 14515/14935ՄՀց, 14543/14963ՄՀց, 14571/14991ՄՀց, 22015/23023ՄՀց, 22022/23030ՄՀց, 22078/23086ՄՀց, 22134/23142ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ընդունելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում №900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի օգոստոսի 2-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

**Մ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան  
----- 2018 թ.